Գործում է սկսած 20.02.2024թ.-ից

Միջնորդավճարներ Հաճախորդի հաշիվներին կանխիկ/անկանխիկ մուտքագրվող/ելքագրվող գումարների նկատմամբ													
Հաշվի Արժույթ	ՀՀ դրամ (AMD)		ԱՄՆ դոլար (USD)		Եվրո (EUR)			ՌԴ ռուբլի (RUB)		Վրացական լարի (GEL)		Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ(GBP)	
Մուտք/Ելք	Մուտք	Ելք	մուտք	Ելք	մուտք		Ելք	մուտք	Ելք	մուտք	Ելք	մուտք	Ելք
ՀՀ ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ Հաճախորդ	0%*	0.2%	0**%	2%	0%	1%***	2%	1%	0.5%	0%	0.5%	0.6%	0.5%

* Դրամարկղի միջոցով ՀՀ դրամ արժույթով կանխիկ դրամի մուտքագրում մինչև 50,000 ՀՀ դրամը -200 ՀՀ դրամ միջնորդավճար:

50,000 ՀՀ դրամը գերազանցող, ինչպես նաև հաշիվներին միաժամանակ մեկից ավելի դրամական միջոցների մուտք իրականացնելու դեպքում (այսուհետ՝ խմբային մուտք)-անվճար

Խմբային մուտքի հանձնարարականը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով:

** 1996-2003թթ. (ներառյալ) թողարկման 5, 10, 20, 50 ԱՄՆ դոլար և 1996-2006թթ. (ներառյալ) թողարկման 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով թղթադրամների մուտքագրում և/կամ փոխարկում՝ 1% (Բանկի հաշվետեր հաճախորդի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև 1 000 ԱՄՆ դոլարի (ներառյալ) չափով գումարի մուտքագրումը և/կամ փոխարկումը անվճար է)

*** 500 եվրո անվանական արժեքով կանխիկ գումարի մուտքագրում հաշվին կամ փոխարկում

Ուշադրություն

Հաճախորդի հաշիվներից կանխիկ գումարի ելքագրման դեպքում, աղյուսակում նշված միջնորդավճարները չեն կիրառվում, եթե Հաճախորդն ունի կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափ:

Կանխիկ գումարի ելքագրման միջնորդավճար չի գանձվում Հաճախորդի հաշիվներին առկա դրամական միջոցների և ավանդի գումարի դիմաց հաշվեգրված տոկոսագումարների կանխիկացումից: Բանկում ներդրված ավանդի գումարի կանխիկացման դեպքում աղյուսակում նշված միջնորդավճարները կարող են կիրառվել բացառապես այն դեպքերում, երբ ավանդը ներդրվել է անկանխիկ մուտքագրված միջոցներից կամ անկանխիկ մուտքագրված գումարների կանխիկ ելքագրման դեպքում գումարի կանխիկ ելքագրման միջնորդավճարը չի կիրառվել, որի արդյունքում սպառվել է Հաճախորդի հաշվին ձևավորած կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափը:

Բանկի կողմից տրամադրված վարկի գումարի կանխիկ ելքագրման դեպքում գանձվում են աղյուսակով սահմանված միջնորդավճարները, եթե տվյալ վարկատեսակի պայմաններով այլ բան սահմանված չէ:

Հաճախորդի հաշիվներին դրամական միջոցների անկանխիկ մուտքագրումն իրականացվում է **անվճար**

Կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափը (որի առկայության դեպքում կանխիկ գումարի ելքագրման միջնորդավճար չի կիրառվում) ձևավորվում է յուրաքանչյուր արժույթի գծով առանձին-առանձին՝ ընթացիկ հաշվին/հաշիվներին կանխիկ գումարի մուտքագրումներից և կազմում է տվյալ արժույթի ընթացիկ հաշվին/հաշիվներին կանխիկ մուտքագրված գումարների հանրագումարը: Հաճախորդի ընթացիկ հաշվից կանխիկ գումարի ելքագրման դեպքում նշված սահմանաչափը նվազեցվում է ելքագրվող գումարի չափով՝ ելքագրվող արժույթի համար ձևավորված սահմանաչափից:

Կանխիկ միջոցների մուտքագրում և ելքագրում իրականացվում է միայն վերոնշյալ արժույթներով, Բանկի համար ընդունելի այլ արժույթներով ընթացիկ հաշիվներին կանխիկ գումարի մուտքագրման/ելքագրման ծառայությունը չի մատուցվում: